



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2015թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 162363 գործարք, որոնց քանակը, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 16.7 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 44891 օտարման գործարքների 72.9 %-ը կազմել է առուվաճառքը, 26.5 %-ը՝ նվիրատվությունը և 0.6 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 36.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը

նվազել է 4.5 %-ով: 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 11702 առուվաճառքի գործարքների 66.2 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 14.9 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2014թ.	11 ամիս 2015թ.
Կենտրոն	428000	428000
Արաբկիր	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282700	282700
Նոր-Նորք	252500	253200
Ավան	260200	260700
Էրեբունի	250800	252000
Շենգավիթ	256300	257100
Դավթաշեն	275200	275900
Աջափնյակ	249500	250100
Մալաթիա-Սեբաստիա	242200	243200
Նուբարաշեն	155600	156700
Միջինը Երևանում	273600	274200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3567 բնակարան, որոնց քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 14.9 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)

		11 ամիս 2014թ.	11 ամիս 2015թ.
Արագածոտն	Աշտարակ	115800	116000
	Ապարան	57450	57800
	Թալին	65700	66100
Արարատ	Արտաշատ	96300	97800
	Մասիս	115400	115800
	Վեդի	100500	101300
	Արարատ	75400	76500
Արմավիր	Վաղարշապատ	154150	154100
	Արմավիր	121200	121200
	Մեծամոր	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99200	99300
	Գավառ	59800	60100
	Մարտունի	107700	107700
	Վարդենիս	44800	44900
	Ճամբարակ	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500
	Ստեփանավան	74500	74600
	Սպիտակ	99800	99800
	Ալավերդի	55000	55200
	Տաշիր	47300	47300
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20200	20400
Կոտայք	Աբովյան	155100	155100
	Նոր Հաճն	128600	128550
	Բյուրեղավան	108150	108200
	Եղվարդ	109400	109400
	Հրազդան	63800	63800
	Ծաղկաձոր	292500	292400
	Չարենցավան	85500	85500
Շիրակ	Գյումրի	109300	109200
	Արթիկ	66700	66800
	Մարալիկ	40700	40800
Սյունիք	Գորիս	122100	123000
	Կապան	92700	93900
	Սիսիան	91200	91900
	Մեղրի	80900	81900
	Ագարակ	46900	47200
	Քաջարան	94700	94600
	Դաստակերտ	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000
	Եղեգնաձոր	125300	125600
	Ջերմուկ	112800	112900
Տավուշ	Դիլիջան	113200	114200
	Իջևան	118300	118400
	Բերդ	60200	60200
	Նոյեմբերյան	49900	50000
	Այրում	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ²

մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 3839 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1131, մարզերում՝ 2708: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 19.0 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 12.8 %-ով, իսկ մարզերում՝ 21.3 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2014թ.	11 ամիս 2015թ.
Կենտրոն	476100	476100
Արաբկիր	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200
Ավան	270500	270500
Էրեբունի	239700	239750
Շենգավիթ	255000	255000
Դավթաշեն	276000	276000
Աջափնյակ	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000
Նուբարաշեն	150700	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել են անփոփոխ:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		11 ամիս 2014թ.	11 ամիս 2015թ.

Արագածոտն	Աշտարակ	136200	136200
	Ապարան	60050	60050
	Թալին	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000
	Մասիս	115100	115100
	Վեդի	102300	102300
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100
	Արմավիր	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800
	Գավառ	57100	57100
	Մարտունի	96100	96100
	Վարդենիս	41000	41000
	Ճամբարակ	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100300
	Ստեփանավան	90000	90600
	Սպիտակ	114000	114000
	Ալավերդի	50200	50200
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
Կոտայք	Աբովյան	157000	157100
	Նոր Հաճն	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000
	Չարենցավան	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118800
	Արթիկ	63100	63100
	Մարալիկ	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000
	Կապան	100000	100300
	Սիսիան	96500	96500
	Մեղրի	84500	84500
	Ագարակ	46900	46900
	Դաստակերտ	11610	11610
Վայոց ձոր	Վայք	90050	90100
	Եղեգնաձոր	116600	116600
	Զերմուկ	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	114200
	Իջևան	123200	123200
	Բերդ	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 16801 միավոր (8518.51 հա) հող, որից Երևանում՝ 1057 միավոր (90.31 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 10245 միավոր (7916.07 հա), որից Երևանում՝ 77 միավոր (8.70 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 4354 միավոր (407.87 հա), որից Երևանում՝ 534 միավոր (43.46 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1458 միավոր (94.98 հա), որից Երևանում՝ 418 միավոր (31.35 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 167 միավոր (46.97 հա), որից Երևանում՝ 28 միավոր (6.80 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 48 միավոր (26.09 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 520 միավոր (23.55 հա),
- ջրային հող՝ 8 միավոր (2.33 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (0.65 հա) ընդհանուր մակերեսով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 13916 միավորի (7494.32 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 833 միավոր (67.08 հա), նվիրատվության գործարք՝ 2743 միավոր (969.71 հա), որից Երևանում՝ 204 միավոր (22.79 հա) և փոխանակության գործարք՝ 142 միավոր (54.48 հա), որից Երևանում՝ 20 միավոր (0.44 հա):

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 9.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28.1 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 12.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 19.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1908.54 հա, որից 1853.39 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.9 %-ը կամ 3189 միավորը (1386.67 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 267 միավոր (15.28 հա), իսկ 76.3 %-ը կամ 10621 միավորը (6059.97 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 553 միավոր (51.70 հա): 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 106 գործարք (47.68 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	7	1.90	99	7.25	161	6.13	50	2.97	17	3.60	295	24.40	191	20.73
Արագածոտն	118	76.51	6	0.36	18	1.11	35	1.46	554	561.17	2	1.50	224	39.46	14	1.87
Արարատ	172	220.30	19	1.75	127	8.08	109	4.50	828	573.26	5	3.91	399	36.56	40	1.29
Արմավիր	80	511.41	9	1.42	6	0.07	20	0.82	928	1341.98	5	1.09	494	50.57	32	1.15
Գեղարքունիք	41	15.58	6	1.45	104	9.64	75	6.71	598	328.88	6	1.16	132	16.49	20	1.42
Լոռի	61	28.79	8	2.26	85	3.17	119	6.62	2510	1500.88	4	0.18	82	7.77	34	0.74
Կոտայք	182	231.18	9	2.46	334	11.73	88	3.93	912	552.79	5	1.20	623	54.40	70	11.89
Շիրակ	94	44.55	5	1.56	52	0.92	56	2.76	409	428.47	2	0.10	127	21.44	15	1.32
Սյունիք	14	14.47	7	3.97	36	4.59	19	1.59	258	219.81	2	0.05	66	6.45	13	0.65
Վայոց ձոր	56	85.38	2	0.61	21	2.13	13	0.21	337	177.69	2	0.11	36	3.86	13	0.45
Տավուշ	47	21.20	13	1.13	42	2.88	89	3.43	136	39.45	2	0.10	86	7.76	20	2.40
Ընդամենը	865	1249.37	91	18.87	924	51.57	784	38.16	7520	5727.35	52	13.00	2564	269.16	462	43.91

Ստորև ներկայացվում է 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Միավոր	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	148	3.79	4	0.12	63	2.01	81	1.66	119	11.49	0	0.00	3	1.78	36	5.25	80	4.46
Արագածոտն	10	0.07	0	0.00	2	0.02	8	0.05	152	77.73	103	74.86	6	0.36	16	1.09	27	1.42
Արարատ	17	0.15	1	0.05	2	0.01	14	0.09	404	211.81	166	197.63	18	1.70	125	8.07	95	4.41
Արմավիր	13	0.28	3	0.09	3	0.05	7	0.14	97	505.85	75	503.82	6	1.33	3	0.02	13	0.68
Գեղարքունիք	15	0.68	0	0.00	11	0.46	4	0.22	199	31.17	29	14.05	6	1.45	93	9.18	71	6.49
Լոռի	44	1.44	0	0.00	9	0.06	35	1.38	198	36.29	30	25.70	8	2.26	76	3.10	84	5.23
Կոտայք	154	1.112	1	0.002	146	1.03	7	0.08	456	246.66	179	229.65	8	2.46	188	10.70	81	3.85
Շիրակ	57	2.31	1	0.12	23	0.25	33	1.94	79	28.81	23	25.89	4	1.43	29	0.67	23	0.82
Սյունիք	26	0.78	1	0.09	21	0.24	4	0.45	48	21.81	12	12.45	6	3.88	15	4.35	15	1.13
Վայոց ձոր	7	0.62	1	0.57	3	0.02	3	0.03	85	87.71	56	85.38	1	0.04	18	2.11	10	0.18
Տավուշ	17	0.59	2	0.11	6	0.15	9	0.33	172	27.96	45	21.11	11	1.02	36	2.73	80	3.10
Ընդամենը	508	11.82	14	1.15	289	4.30	205	6.37	2009	1287.29	718	1190.54	77	17.71	635	47.27	579	31.77

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 147 գործարք (58.83 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների

քանակը նվազել է 2.9 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 19.6 %-ով, իսկ մարզերում՝ 1.6 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 22.1 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 15.6 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 10.8 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ աճել է 2.6 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	88	65.83	36.8	1400.0	495.9	333	269.48	365.0	12000.0	3736.6
Ապարան	5	0.57	147.6	1157.7	726.6	30	18.85	86.5	2727.3	650.3
Թալին	5	4.61	38.1	400.0	173.3	116	152.73	93.6	5494.5	795.1
Ծաղկահովիտ	5	3.85	72.5	220.0	154.8	40	107.18	79.5	1000.0	347.4
Արարատի մարզ										
Արտաշատ	76	92.69	68.5	4580.0	1106.5	379	125.71	335.1	10833.3	2604.9
Մասիս	35	28.50	60.3	6002.2	1389.4	108	93.60	200.0	11904.8	3103.0
Վեդի	55	76.44	58.6	5031.3	1057.1	316	291.05	207.0	10795.1	1839.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	26	75.10	30.5	2362.4	441.2	412	521.85	294.3	9090.0	1235.9
Բաղրամյան	25	365.99	67.5	1217.7	385.8	151	559.44	90.6	2561.1	898.0
Վարդաշապատ	24	62.73	57.7	1681.7	652.0	342	201.16	444.4	11764.7	1950.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	6.78	561.0	2000.0	975.6	307	96.32	199.8	1875.0	462.3
Ճամբարակ	1	0.12	1811.7	1811.7	1811.7	10	8.90	60.5	953.3	352.3
Մարտունի	16	2.71	130.0	2257.7	315.2	101	12.14	51.1	2850.0	806.3
Սևան	6	3.43	172.5	1221.0	706.2	72	24.37	52.2	2134.8	343.2
Վարդենիս	2	1.02	354.8	555.5	455.2	104	186.57	41.2	2575.1	425.6
Լոռու մարզ										
Ալավերդի	9	1.91	167.1	16435.6	3925.0	454	127.40	170.4	6424.2	597.2
Գուգարք	9	0.96	172.5	1380.9	798.8	173	45.68	234.6	6065.9	795.8
Սպիտակ						40	12.30	250.0	5555.5	694.8
Ստեփանավան	6	17.24	169.8	1274.3	754.6	52	40.58	90.6	1686.6	389.1
Տաշիր	6	5.58	167.8	1487.9	664.8	1781	1264.31	45.3	1384.4	180.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	50	51.89	78.6	6887.9	2097.7	307	179.99	279.3	11942.7	3993.3
Եղվարդ	99	159.92	36.6	32341.9	888.3	446	267.75	174.4	11971.8	2434.4
Հրազդան	30	17.84	85.5	1191.0	552.7	139	71.62	130.5	10256.4	1147.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	4	2.26	115.5	388.1	221.7	141	136.88	252.0	1693.1	627.1
Ամասիա	1	3.00	151.8	151.8	151.8	15	37.33	40.9	261.0	132.1
Անի	12	10.81	78.4	828.0	310.3	139	135.25	110.6	546.9	453.5
Աշոցք						18	28.97	58.5	215.8	137.6
Արթիկ	6	9.82	209.0	660.0	320.6	91	83.96	79.4	1428.6	498.2
Սյունիքի մարզ										
Գորիս						46	48.80	92.6	1023.2	791.5
Կապան	4	2.78	357.9	1300.0	694.9	29	39.91	120.0	841.6	399.5
Մեղրի	6	8.53	347.6	714.3	454.9	27	13.76	193.0	3000.0	753.9
Սիսիան	2	1.14	150.0	159.5	154.7	155	115.86	46.3	1977.4	600.4
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	21	26.17	21.7	755.7	129.6	78	45.61	125.0	10000.0	1832.6
Վայք	35	59.22	44.7	13239.1	1270.9	259	132.08	58.8	1430.7	599.6

Տավուշի մարզ										
Բերր	1	0.70	235.7	235.7	235.7	52	8.44	213.3	3783.8	674.1
Իջևան	35	17.41	140.7	3300.0	842.8	47	12.51	267.5	9454.5	1401.5
Նոյեմբերյան	9	3.00	166.8	2922.7	1024.6	36	18.05	46.7	7368.4	977.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	13	8547.7	112.7	5897.1	3082.7	165	154839.4	130.7	22200.0	2587.0
Ապարան	2	412.5	273.8	5622.2	2948.0	11	15450.0	124.1	609.6	390.4
Թալին	1	1929.0	151.2	151.2	151.2	15	23261.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						3	9443.0	60.0	214.3	93.1
Արարատի մարզ										
Արտաշատ	21	17027.5	346.2	5547.8	1501.4	110	128017.5	173.9	7140.3	904.9
Մաախ	96	59056.5	799.6	5082.9	2671.2	195	146076.1	187.5	25000.0	1210.1
Վեդի	8	4613.2	150.5	2500.0	1260.9	89	86789.2	126.1	5000.0	663.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	183.0	359.1	2940.0	1540.4	179	191290.6	131.6	9090.9	1214.6
Բաղրամյան						8	6910.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						295	293284.6	197.4	26528.4	1531.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	24	33272.6	172.6	272.1	242.9	24	29025.3	186.6	1084.3	683.9
Ճամբարակ	3	122.5	312.5	384.8	360.0	8	9435.0	71.3	2286.2	147.2
Մարտունի	37	39972.0	73.5	833.3	279.6	69	82078.1	119.3	5000.0	281.5
Սևան	4	3008.1	411.0	2300.0	1331.2	10	9946.5	240.0	3110.4	333.6
Վարդենիս	25	15406.4	66.0	600.0	284.5	20	33289.3	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	46	16580.2	233.7	2700.0	1372.4	24	26320.7	114.3	1388.9	217.1
Գուգարք	19	5065.6	105.8	2489.5	1850.4	29	23425.9	77.9	14083.3	1260.4
Սպիտակ	9	9184.2	145.3	245.0	207.0	11	11880.0	104.9	1348.3	206.2
Ստեփանավան						11	11785.0	88.2	1666.7	175.7
Տաշիր	2	214.7	297.0	300.0	298.3	3	1771.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արուսյան	139	79464.0	301.2	5647.9	3197.4	351	299843.1	264.5	35353.5	1983.3
Եղվարդ	42	25424.4	204.7	5041.5	2594.0	219	197170.3	173.6	27000.0	2862.4
Հրազդան	7	2074.8	243.1	3240.0	2005.2	46	39461.9	117.7	34848.5	1318.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	16	4058.6	174.2	10482.5	4958.2	65	136381.1	113.6	18750.0	335.4
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	4	2087.7	244.2	376.8	283.4	19	25259.9	67.9	180.6	196.5
Աշոցք						2	12310.0	40.8	144.0	65.0
Արթիկ	9	555.0	300.0	5500.0	2819.7	37	38461.7	111.8	5000.0	218.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	835.0	744.9	744.9	744.9	21	18925.0	112.2	1700.0	365.4
Կապան	10	41027.7	115.2	2700.0	1263.8	11	14733.0	67.9	2638.9	344.5
Մեղրի	3	1231.3	305.9	1081.8	506.0	20	14890.9	68.5	632.9	250.1
Սիսիան	1	378.0	607.2	607.2	607.2	13	14792.0	123.5	875.0	236.7

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	15	19200.0	56.7	1038.8	546.1	24	27789.9	96.7	7659.6	508.9
Վայք	3	1912.0	851.6	1325.2	1203.7	7	8309.0	120.7	1448.3	247.1
Տավուշի մարզ										
Բերդ	1	583.3	550.3	550.3	550.3	7	6799.4	75.8	810.0	125.3
Իջևան	28	23688.3	52.3	3000.0	1863.4	69	59526.5	74.1	14423.1	526.3
Նոյեմբերյան	7	2988.0	100.8	932.2	399.7	9	10039.9	125.0	1948.1	246.9

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6348 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.9 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 74.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակը նվազել է 14.0 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 484 բնակարանի, 509 անհատական բնակելի տան, 2956 հասարակական, 637 արտադրական նշանակության օբյեկտի, 1625 միավոր հողի, 130 ավտոտնակի և 7 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 73 վարձակալության գործարքի քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 12.3 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 26909.77 հա հողերից 10.45 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 26899.33 հա հողերի 4475.64 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 71.08 հա արդյունաբերական օբյեկտների, 958.44 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Շիրակի մարզում՝ 21776.38 հա, որից 580.31 հա գյուղատնտեսական նշանակության:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 15428 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.5 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 31.7 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.0 %), առանձնատների (21.6 %). հասարակական նշանակության օբյեկտների (10.8 %) և հողերի (11.0 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8615 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2014 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ նվազել է 31.6 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 5055.29 հա մակերեսով հող, որից 100.87 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 59.2 %-ը կամ 2990.21 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.83 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Սյունիքի մարզում՝ 1942.99 հա, որից 61.10 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1299 գործարք, որից 918-ը՝ Երևանում: 2014 թվականի նույն

Ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 24.5 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 20.4 %-ով, իսկ մարզերում՝ 32.8 %-ով:

2015 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 19244 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2014 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.5 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.9 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում(25.0 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե